ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՄԽ-03

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 3 նիստի

16-ը փետրվարի 2024թ.

ԱԺ 314 սենյակ, ժ.16:00

Ս.թ. փետրվարի 16-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3-րդ նիստը, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հավակնորդների 14.02.2024թ. ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրություն:

Խորհրդի բոլոր հինգ անդամները մասնակցում էին նիստին: Նիստը վարում էր՝ Արթուր Հովսեփյանը:

Նիստին մասնակցում էր նաև ԱԺ աշխատակազմից Դիաննա Աթոյանը՝ նիստի արձանագրումն ապահովելու համար:

Օրակարգի 1-ին հարց	Ա.Ջուլհակյանը ներկայացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար հավակնորդների 14.02.2024թ. ներկայացված փաստաթղթերը, որը տրամադրվել էր մրցութային խորհրդին: Խորհուրդը ուսումնասիրեց հավակնորդ Նվարդ Վարդանյանի ներկայացրած փաստաթղթերը, ներկայացված փաթեթների ամբողջականության վերաբերյալ դիտողություններ չեն եղել Խորհրդի անդամների կողմից:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը արձանագրեց , որ Նվարդ Վարդանյանի ներկայացրած փաստաթղթերը ամբողջական են և համապատասխանում են Խորհրդի 11.01.2024թ. որոշմամբ սահմանված անհրաժշետ փաստաթղթերի ցանկին:* *Կողմ 5, դեմ 0*
Օրակարգի 1-ին հարց	Խորհուրդը ուսումնասիրեց հավակնորդ Սարգիս Միրզոյանի հայտը: Հաշվի առնելով, որ Սարգիս Միրզոյանի ներկայացրած դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությամբ չէր հաստատվել վերջինիս կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող պաշտոն առնվազն երեք տարի զբաղեցնելու

	փաստը, ինչպես նաև չէր ներկայացվել դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին 30.05.2019թ. ՀՀ Կառավարության 685-Ն որոշման, 3-րդ հավելվածի 2-րդ, 2.1-րդ և 5-րդ կետերով սահմանված փաստաթղթերը նարկոլոգիական և հոգեկան հիվանդությունների բացակայության վերաբերյալ, ինչպես նաև դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տեղեկանքում բացակայում էր սրտաբանի կողմից համապատասխան նշումը, խորհուրդը առաջարկել էր Ս.Միրզոյանին հիշյալ փաստաթղթերը ներկայացնել մինչև 14.02.2024թ.: Ս.Միրզոյանը սահմանված ժամկետում ամբողջությամբ չէր վերացրել իր փաստաթղթերում առկա թերությունները:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը արձանագրեց ,որ Սարգիս Միրզոյանի փաստաթղթերը չեն համապատասխանում Խորհրդի 11.01.2024թ. որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին:* *Կողմ 5, դեմ 0*

Նիստը վարող՝ Ա. Հովսեփյան

Նիստի քարտուղար՝ Դ.Աթոյան